ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

26.10.2023 16:16

Փաստաբանների պալատը շարունակում է հյուրընկալել ապագա իրավաբաններին:

Այս անգամ Փաստաբանների պալատ են այցելել Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ամբիոնի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողները:

Նրանց ողջունել է Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը:

Փաստաբանների պալատի նախագահն ապագա իրավաբանների հետ զրուցել է փաստաբանական գործունեության առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ներկայացրել Պալատի կառուցվածքը:

Այնուհետև հյուրընկալված ուսանողներին հնարավորություն է ընձեռնվել շրջելու Փաստաբանների պալատի վարչական շենքում և անմիջականորեն ծանոթանալու Փաստաբանների պալատում, Փաստաբանական Ակադեմիայում և Հանրային պաշտպանի գրասենյակում տարվող աշխատանքներին:







Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })